Արձանագրություն N 4
<<ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2>> ծածկագրով ընթացակարգի
գնահատման արդյունքների հաստատման նիստի շարունակություն

ք. Երևան 05 փետրվարի, 2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/ Բ. Գևորգյան

Ա. Շահինյան

Քարտուղար՝ /ԳՊ/Մհմ/ Վ. Ղազարյան

1. **<<ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2>>** ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից չի շտկվել 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը /Հրավերի հավելված 3.1/, սակայն <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից 31.01.2020թ. գրությամբ ներկայացվել է պարզաբանում հանձնաժողովի կողմից կատարված դիտողությունների վերաբերյալ (կցվում է):

<<ՀՀ ՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը քննարկեց <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկայացված պարզաբանումը և արձանագրեց.

- տպիչ սարքն արտադրողի պաշտոնական նկարագրության մեջ առկա գրառման համաձայն մասնակցի կողմից առաջարկված տպիչի մոդելը ապահովում է նաև 1200 x 1200 դիփիայ տպագրության որակ, սակայն մասնակցի կողմից ներկայացված բնութագրում նշված է <<**մինչև** 1200 x 1200 դիփիայ >>, ինչը մասնակիցը կարող էր շտկել

- մասնակիցը նշում է, որ հրավերով սահմանված բնութագրում առկա չի եղել մանրամասնում թղթի դարակների վերաբերյալ՝ արդյոք դրանք մուտքի են, թե ելքի: Ըստ այդմ մասնակիցը առաջարկել է 250 թերթ տարողությամբ մեկ մուտքի և մեկ ելքի դարակով տպիչ սարք: Քանի որ բոլոր տպիչ սարքերը համալրված են լինում թղթի ելքի դարակով (պնակով, անգլ.՝ bin) /ինչը նկարագրելու անհրաժեշտություն չկա/, ուստի սահմանվել է միայն մուտքի դարակների (անգլ.՝tray) քանակը՝ 2 հատ, 250 թերթ տարողությամբ:

- հրավերի տեխնիկական բնութագրում հստակ նշված է ԱԴԷՖ սարքի առկայության պահանջ, սակայն մասնակցի կողմից առաջարկված տպիչի մոդելը ունի ԱԴԷՖ ավելացնելու

հնարավորություն, որը պետք է ձեռք բերվի լրացուցիչ գնման միջոցով: Մասնակիցը նշում է, որ հրավերում ԱԴԷՖ-ին վերաբերվող տողի <<լրացուցիչ>> բառը իր կողմից **հասկացվել է**, որ ԱԴԷՖ-ը կարող է ձեռք բերվել լրացուցիչ, ինչի վերաբերյալ Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակիցը կարող էր դիմել պատվիրատուին և սահմանված ժամանակահատվածում պահանջել պարզաբանում, որը մասնակցի կողմից չի արվել:

2. Ելնելով վերոգրյալից <<ՀՀ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ, և որոշեց մերժել <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի հայտը:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հաջորդաբար տեղ զբաղեցրած <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է 820000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը որոշեց <<ՀՀ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/2>> ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Հանձնաժողովի Նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ	_____	Ա. Մարտիրոսյան
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ	_____	Բ. Գևորգյան
	_____	Ա. Շահինյան
Քարտուղար՝ ԳՊ/ՄԻՄ	_____	Վ. Ղազարյան